

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ»
Կազմակերպություն ՓԲԸ
ԽՈՐՀՐԳԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19
Խորհրդի նախագահ՝
Բ. Ասատրյան
«_15_» __04__ 2014թ.



«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

Առանց գրավային ապահովվածության
վարկերի տրամադրման
կարգ

1. ՆՊԱՏԱԿԸ

1.1 Եթե վարկը տրամադրված է առանց գրավային ապահովվածության, բայց միևնույն ժամանակ ապահովված է վարկառուի ֆինանսական վիճակը (այդ թվում՝ ֆինանսական հոսքերը) բնութագրող բավարար տեղեկատվությամբ և/կամ վարկի վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ, ապա վարկը համարվում է ոչ բլանկային:

2. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Վարկը համարվում է ապահովված սույն ընթացակարգի 1.1 կետում նշված տեղեկատվությամբ, երբ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) վարկառուների և երաշխավորների ընտրությունը կատարում է սույն կարգի շրջանակներում:

2.2 Սույն կարգի իմաստով Կազմակերպության համար ընդունելի են համարվում այն հաճախորդները, ովքեր ունեն բացահայտված և կայուն եկամուտներ, որևէ սեփականություն (անշարժ գույք, ավտոմեքենա), ընդ որում այդ գույքերի արժեքները պետք է նվազագույնը հավասար լինեն վարկի գումարի և մեկ տարվա համար հաշվարկված տոկոսագումարի հանրագումարին:

2.3 Բացահայտված են համարվում այն եկամուտները, որոնք փաստաթղթավորված են և ստուգելի:

2.3.1 Վարկի մերժման պատճառ են հանդիսանում.

- Կազմակերպությանն անարժանահավատ տվյալների տրամադրումը,
- հաճախորդի ֆինանսական անկայուն վիճակը,
- վարկառուի ցածր վարկունակությունը՝ ելնելով կատարված վերլուծության արդյունքից (հավելված 1, կցվում է)
- իրավասու մարմինների կողմից վարկառուի, երաշխավորների կամ նրանց գույքի հանդեպ կիրառված սանկցիաները /արգելանք, կալանք/
- երաշխավորություն տվող անձանց չհամապատասխանելը Կազմակերպության պահանջներին
- հաճախորդը և երաշխավորներն ունեն ժամկետանց պարտավորություններ
- այլ հիմնարար պատճառներ:

3. Վարկի տրամադրման պայմանները

- 3.1.1 Վարկերը տրամադրվում են սպառողական նպատակով:
- 3.1.2 Վարկը տրամադրվում է մինչև 24 ամիս մարման ժամկետով:
- 3.1.3 Վարկի նվազագույն գումարը 100.000 ՀՀ դրամ է:
- 3.1.4 Վարկի առավելագույն գումարը 3,000,000 ՀՀ դրամ է:
- 3.1.5 Վարկի տրամադրման (մերժման) որոշումը կայացվում է Կազմակերպության վարկային կոմիտեի կողմից վարկավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Ուսումնասիրության ընթացքից ելնելով՝ վերոնշյալ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան 3 (երեք) աշխատանքային օրով:
- 3.1.6 Կախված **վարկի գումար/գուտ աշխատավարձ** հարաբերակցությունից՝ սահմանվում են վարկի տրամադրման տարբեր պայմաններ՝
- 3.1.6.1 Չուտ աշխատավարձի մինչև **3ապատիկի** չափ վարկ ստանալու համար վարկառուն պետք է ունենա գրանցված աշխատանք, սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք կամ ավտոմեքենա: Հայտնի և հեղինակավոր կազմակերպությունում աշխատելու դեպքում, որտեղ վարկառուն ունի 2 տարուց ավել աշխատանքային փորձ, վարկը կարող է տրամադրվել նաև սեփականություն չունենալու պարագայում:
- 3.1.6.2 Չուտ աշխատավարձի **3ապատիկից ավել մինչև 5ապատիկի** չափ վարկ ստանալու համար վարկառուն պետք է ունենա գրանցված աշխատանք, սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք կամ ավտոմեքենա: Անհրաժեշտ է նաև 1 ֆիզ. անձի երաշխավորություն, ով կունենա բավարար եկամուտներ (համաձայն հավելված 1-ի) կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք կամ ավտոմեքենա:
- 3.1.6.3 Չուտ աշխատավարձի **5ապատիկից ավել** վարկ ստանալու համար վարկառուն պետք է ունենա գրանցված աշխատանք, սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք կամ ավտոմեքենա: Անհրաժեշտ է նաև 2 ֆիզ. անձի երաշխավորություն, ովքեր կունենա բավարար եկամուտներ (համաձայն հավելված 1-ի) և նրանցից առնվազն մեկը սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք կամ ավտոմեքենա:
- 3.1.7 Վարկ ստանալու համար Կազմակերպություն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝
- Վարկային դիմում-հայտ, որը լրացվում է Վարկառուի և Երաշխավորների կողմից (առկայության դեպքում),

- Անճնագրերի և սոցիալական քարտերի պատճենները՝ վարկային մասնագետի ներկայությամբ կատարված,
- տեղեկանք աշխատավայրից, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ վավերապայմանները՝ զբաղեցրած պաշտոնը, ամսական աշխատավարձի չափը, տրման ամսաթիվը և կազմակերպության ղեկավարի ստորագրությունը, անհրաժեշտության դեպքում քաղվածք բանկային հաշվից, աշխատանքային պայմանագրի և աշխատանքային գրքույկի պատճենը,
- այլ եկամուտների առկայության դեպքում՝ այդ եկամուտները հավաստող փաստաթղթերը
- սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր (պատճեններ)

3.1.8 Ինչպես մինչև պայմանագրի կնքումը, այնպես էլ հետո, Կազմակերպության պահանջով կարող են պահանջվել վարկառուի և երաշխավորի վերաբերյալ 3.1.7 կետում չնշված այլ փաստաթղթեր:

4. Վարկի տրամադրման ընթացակարգը

- 4.1.1 Կազմակերպության վարկային մասնագետը վարկային դիմում-հայտը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո կատարում է վարկառուի, երաշխավորի (անհրաժեշտության դեպքում) վճարունակության վերլուծություն՝ համաձայն հավելված 1-ի, վարկառուի և երաշխավորների վարկային պատմության ուսումնասիրություն, կազմում է եզրակացություն և ներկայացնում վարկային կոմիտեի քննարկմանը:
- 4.1.2 Դրական որոշում կայացնելուց հետո վարկային մասնագետը տեղեկացնում է հաճախորդին նրա հայտի վերաբերյալ կայացված որոշման մասին, դրական պատասխանի դեպքում կնքվում է վարկային, իսկ երաշխավորների հետ՝ երաշխավորության պայմանագրեր, որից հետո կատարվում է վարկի տրամադրում:

5.1 Վարկի, տոկոսագումարի, տույժերի, հաշվարկումը և գանձումը, մարման պայմանները և ժամկետները

- 5.1.1 Համաձայն վարկային պայմանագրի Վարկի օգտագործման համար վարկառուն Կազմակերպությանը վճարում է տոկոսագումարներ:
- 5.1.2 Տոկոսների հաշվարկն իրականացվում է տարին ընդունելով 365 օր:

5.1.3 Վարկի և/կամ տոկոսագումարի մարումը վարկային պայմանագրում սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում, ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար կիրառվում է վարկային պայմանագրով սահմանված չափով տույժ:

6.1 Եզրափակիչ դրույթներ

- 6.1.1 Սույն կարգը հաստատվում է Կազմակերպության Խորհրդի կողմից և ուժի մեջ մտնում հաստատման հաջորդ օրվանից:
- 6.1.2 Սույն կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Կազմակերպության Խորհրդի որոշմամբ:
- 6.1.3 Սույն կարգը հաստատելուց հետո ուժը կորցրած ճանաչել 23.07.2012թ Խորհրդի թիվ 31 նիստով հաստատված «Առանց գրավային ապահովվածության վարկերի տրամադրման ընթացակարգը»:
- 6.1.4 Սույն կարգը ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ համապատասխան եզրակացություն ստանալու համար:

Հավելված 1

Հաճախորդի եկամուտները և ծախսերը

Եկամուտ ՀՀ դրամ յուր. ամիս		Ծախս ՀՀ դրամ յուր. ամիս	
Աշխատավարձ		Անձնական ծախսեր	Min 70,000
Դիվիդենտ		Կոմունալ վճարներ	
Վարձավճար		Վարձավճար	
Տրանսֆերտներ		Ուսման վարձ	
Այլ եկամուտ		Ապահովագրություն	
		Գործող վարկի մարում	
		Ընտանեկան ծախսեր	
		Այլ ծախսեր	
Ընդամենը եկամուտ		Ընդամենը ծախս	
Դրական մնացորդ		Բացասական մնացորդ	

Եթե եկամուտները գերազանցում են ծախսերին, տարբերությունը գրանցվում է դրական մնացորդ սյունում, հակառակ դեպքում տարբերությունը գրանցվում է բացասական մնացորդ սյունում:

Հաճախորդի անձնական ծախսը սահմանվում է նվազագույնը 70,000 դրամ, եթե նրա կողմից ավելի մեծ գումար հայտարարված չէ:

Գրական մնացորդ / ստացվելիք վարկի համար նախատեսված վարկի գումարի և տոկոսագումարի
ամսական մարում հարաբերությունը պետք է մեծ լինի 1.1-ից: